ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

<< 04>> օգոստոս 2014թ N 66

ք. Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի հուլիսի 31-ի N682-Ա որոշումը.

**Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ՝**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի՝

1) ղեկավարի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-1.1-1) անձնագրի 4-րդ և 5-րդ կետերից հանել <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալը>> բառերը .

2) ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-1) անձնագրի 5-րդ կետի երկրորդ պարբերության <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալի>> բառերը փոխարինել <<Աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետի>> բառերով .

3) քաղաքաշինության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-2) անձնագրի 5-րդ կետից հանել <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալը>>բառերը.

4) կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-4) անձնագրի 5-րդ կետի առաջին և երկրորդ պարբերություններից համապատասխանաբար հանել <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալը>> և <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալի>> բառերը .

5) առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-6) անձնագրի 5-րդ կետի

առաջին և երկրորդ պարբերություններից համապատասխանաբար հանել <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալը>> և <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալի>> բառերը.

6) քարտուղարության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-7) անձնագրի 5-րդ կետի երկրորդ պարբերության <<Քարտուղարության պետը>> բառերից հետո լրացնել <<Աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի>> բառերով.

7) տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-8) անձնագրի 5-րդ կետի առաջին և երկրորդ պարբերություններից համապատասխանաբար հանել <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալը>> և <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալի>> բառերը.

8) քարտուղարության ընդհանուր բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.2-8) անձնագրի 5-րդ կետի երկրորդ պարբերության <<քարտուղարության պետի>> բառերից հետո լրացնել <<Աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի>> բառերով և <<նրան>>-ը փոխարինել<<նրանց>> բառով.

9) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.2-12) անձնագրի 4-րդ կետի առաջին պարբերության <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալը>> բառերը փոխարինել <<Աշխատակազմի քարտուղարության պետը կամ քարտուղարության ընդհանուր բաժնի պետը>> բառերով և երկրորդ պարբերությունը հանել.

10) զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.2-18) անձնագրի՝

ա) 5-րդ կետի առաջին պարբերության <<Բաժնի գլխավոր մասնագետը>> բառերը փոխարինել <<Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետը>> բառերով .

բ) հանել 4-րդ կետը և 5-րդ կետի երկրորդ պարբերությունը, 7-րդ կետի բ) ենթակետը, 11-րդ կետի ժդ), ժե) ենթակետերը .

11) քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 69-2.1-(1-2), 69-2.1-(4-8), 69-2.2-2, 69-2.2-(4-5), 69-2.2-(8-9), 69-2.2-(11-16), 69-2.2-(18-21)) անձնագրերի 8-րդ կետի բ) ենթակետից հանել <<Աշխատակազմի ղեկավարի տեղակալի>> բառերը .

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Է.ՂԱԶԱՐՅԱՆ